Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունիսի 17-ի N 1016 - Ա որոշման

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՆՔՎԵԼԻՔ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Որոտան-Արփա-Սևան» հիդրոհանգույցի (այսուհետ՝ հիդրոհանգույց) ջրային համակարգն անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու վերաբերյալ կնքվելիք պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) հիմնական նպատակն է ապահովել հիդրոհանգույցով առավելագույն ծավալով ջրի տեղափոխումը Սևանա լիճ, որի համար՝

ա. ընկերությունը պարտավոր է ապահովել հետևյալ հիմնախնդիրների իրականացումը՝

ապահովել հիդրոհանգույցի ջրային համակարգով Սևանա լիճ ջրի տեղափոխման ծավալը՝ ջրօգտագործման թույլտվությամբ տրված ջրաքանակների սահմաններում,

ապահովել հիդրոհանգույցի անվտանգ և անխափան շահագործումը, պահպանումը, ինչպես նաև շահագործող անձնակազմի կողմից անվտանգության նորմերի պահպանումը,

ապահովել ջրային համակարգի օտարման գոտում սանիտարական վիճակի պահպանումը,

ապահովել կնքված պայմանագրով նախատեսված այլ պարտավորությունների անթերի կատարումը, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N 1012-Ն որոշմամբ հաստատված Հիդրոտեխնիկական կառուցվածքների օգտագործման և անվտանգության ապահովման իրականացման կարգի և սահմանված կարգով հաստատված «Որոտան-Արփա» թունելի հիդրոտեխնիկական կառուցվածքների համալիր շահագործման և «Արփա-Սևան» թունելի և նրա հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործման կանոնների (այսուհետ՝ շահագործման կանոններ) պահանջներից,

իրականացնել տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով և (կամ) այլ աղբյուրներից ստացվելիք միջոցներով նախատեսված ծրագրով իրականացվելիք, ինչպես նաև այդ ծրագրից դուրս առաջացած հրատապ

աշխատանքների (վթարային իրավիճակների դեպքում), անհրաժեշտության դեպքում, ընթացիկ և հիմնական վերանորոգման, վերակառուցման աշխատանքները.

բ. հիդրոհանգույցը շահագործելու և պահպանելու, ինչպես նաև ընթացիկ և հիմնական վերանորոգման, վերակառուցման աշխատանքները ֆինանսավորվելու են այդ նպատակի համար նախատեսված տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և (կամ) այլ աղբյուրներից ստացվելիք միջոցների սահմաններում, որի կապակցությամբ յուրաքանչյուր տարվա համար կկնքվի պայմանագիր կամ լրացուցիչ համաձայնագրեր:

Վերոնշյալ նպատակի համար տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և (կամ) այլ աղբյուրներից ստացվելիք գումարների սահմաններից դուրս առաջացած հրատապ աշխատանքների (վթարային իրավիճակների դեպքում) վերաբերյալ ընկերության հետ տարվում են լրացուցիչ քննարկումներ և, անհրաժեշտության դեպքում, ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Ընթացիկ և հիմնական վերանորոգման, վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր), որոնք կազմվել են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը, հանձնվում են ընկերությանը պետական կառավարման լիազորված մարմնի կողմից, իսկ դրանից հետո անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը սահմանված կարգով կազմում է ընկերությունը «Արփա-Սևան» թունելի տեխնիկական վիճակը գնահատող հանձնաժողովի կողմից զննման արդյունքում կազմված թերությունների ակտերի հիման վրա և ներկայացնում է պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը, որոնք և հիմք են հանդիսանում նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

18.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ